թեամբ։* Նորա աշակերտներն էին Բարսեղ Կեսարացին եւ Գրիգոր Աստուածաբանը, աշակերտակից ունենալով բազմաթիւ հայ երիտասարդներ, որոնք եւ յիշւում են նրանց կողմից։ Հայ ուսանողների մասին յիշատակութիւն ունի եւ Լիբանոս յոյն հռետորը իւր աշակերտների թւում։† Ցայտնի է, որ Գրիգոր Լուսաւորիչ եւ որդիքը, Ներսէս մեծ եւ Սահակ Պարթեւ յունական կրթութիւն էին ստացել Կապադովկիայում։ Փարպեցին յիշում է հայ երիտասարդներ գրերի դիւտից առաջ՝ ստիպուած էին «բազում թոշակօք եւ հեռագնաց ճանապարհօք եւ բազմաժամանակեայ դեգերմամբ» ձեռք բերել ասորերէնի դիտութիւնը եկեղեցական պաշտաման համար։ Ամբողջ չորրորդ դարը՝ Լուսաւորչից մինչեւ տառերի գիւտը, բազմաթիւ ուսանողներ պէտք է գնացած լինէին արտասահման ասորի եւ յոյն լեզուներին տիրապետելու համար։ Ս. Սահակի եւ Մեսրոպի աշակերտներ ուղարկելը յոյն-ասորական դպրոցները, սկզբնաւորութիւն չէր, այլ մի դար եւ աւելի արդէն աւանդութիւն դարձած երեւոյթ։

Այս համառօտ տեսութեան նպատակն էր պարզել, թէ եկեղեցական ճարտարապետութեան ծագումը Հայաստանում Գ. դարի վերջերին կամ Դ. դարի սկզբում, միանգամայն հասկանալի է եւ իրական։ Եդեսիայի եւ Հայաստանի քրիստոնեայ պետութիւնների մէջ զարմանալի չէ նոր կրօնի ազդեցութեամբ եւ պահանջների համեմատ քրիստոնէական գրականութեան եւ արուեստի ծագումը։ Արդար Թ.-ի ժամանակակիցն էր եւ բարեկամը նշանաւոր մատենագիր եւ բանաստեղծ Բարդեծանը, որ Հիպոլիտի կողմից «հայ» է կոչւում։ Նորա հոգեւոր երգերը կամ սաղմոսները շատ տարածուած էին եւ երգում էին քրիստոնեաները մինչեւ Եփրեմի ժամանակները։ Մի ուրիշ նշանաւոր մատենագիր Տատիանն էր, Բ. դարի վերջերում, որի Դիաթեսարոն-ը Ե. դարում թարգմանուած է հայերէն։* Մատենագրութեան հետ երեւան է գալիս եւ ճարտարապետութիւնը։ Եդեսիայի առաջին եկեղեցին շինուած է 201 թ., մի աւելի մեծ եկեղեցի 313 թ., այսինքն քրիստոնէութիւնը հռոմէական պետութեան մէջ պետական կրօն դառնալուց առաջ։ Չորրորդ դարում եւ մանաւանդ Ե.-ում շինուած եկեղեցիներ կան Ասորիքում՝ հաստատուն թուականով. ինչպէս 338 թ. ըստ Sarre-ի եւ Herzfeld-ի շինուած Մար Յակոբի եկեղեցին Մծբինում։**

Հարաւ-արեւելեան Հայաստանի քրիստոնէութիւնն էլ սկզբնական շրջաններում ենթարկուած է սիրիական քարոզչութեան. այդ են ցոյց տալիս մեր նախնական աւանդութիւնները նոր կրօնի ծագման եւ հաստատութեան հետ կապուած։ Լուսաւորչի քարոզութեամբ քրիստոնէական կրօնը պետական դառնալուց յետոյ եւս, եթէ Լուսաւորչի եւ նորա տան հայեացքը դէպի արեւմուտք է ուղղուած, չեն պակասում ապացոյցներ, թէ ասորական քարոզիչների մեծ տարբ կար Հայաստանում, որ իւր յաւակնութիւններն ունէր Հայաստանի հայրապետութեան վերայ։ Չորրորդ եւ հինգերորդ դարերում ոչ միայն հայ ուսանողներ դիմում են նաեւ ասորական կեդրոնները, այլ եւ տառերի դիւտի առաջին փորձերը կապուած են ասորական կեդրոնների հետ եւ նոյն իսկ տառերի դիւտից յետոյ՝ թարգմանութեան առաջին փորձը կապուած է ասորերէնի հետ։

Հոգեւոր այս աղերսներով էլ պէտք է հասկանալ նաեւ հայ քրիստոնէական ճարտարապետութեան ծագումն ու նմանութիւնները ասորական-միջագետական հելլենականութեան ենթարկուած արուեստի հետ։ Այս աղերսը աւելի պայծառ կերպով երեւում է Դ.-Զ. դարերի հայ դերեզմանական կոթողներով, որոնց ուսումնասիրութեան անցնում ենք հետեւեալ մասում։

---

*Eunapii Vitae Sophistarum. Boissonade, p. 485 եւ շար.

†Funebris dratio in laudem Basilii Magni.

*Harnack. Christliche Litteratur, Lpzg., եր. 184 եւ 485։

**Archeologische Reise in Euphrat und Tigris Gebiet. Band II. 342-343.

* * *